



99. ՔԱՎՈՐ ՀՄԱԼ ԲԱՆ ՉԷՆԵ

Գեղացիք մարդու մե կը հասկըցուն.

— Հա՛յ,— կըսին,— աչքդի բա՛ց, քու կնիկ հըտ քու քավորոջ կը նստի կանի:

Գեղացին շավտնա.

— Քավոր հմալ բան չէ՛նե:

Ժամանակ մե գընցնա, մարդ գուզե էրթա քաղաք, գխուրջին կը թալի փեջ, գընկնա ճամպա, քիչ մե օր կէրթա, կես ճամպուց կը դառնա գիկա, կը մտնա տուն, կը տեսնա հանդե, քավորն ու ուր կնիկ, քեֆ ուրանց քաշած, մըջ տեղին պարկուկ ին:

— Յա՛,— կըսե,— իդա ո՞ն է պարկի իմ կնկա կուշտ:

Քավորն աչքեր կը բանա, կըսե.

— Ես իմ, սա՛նահեր, խուրբան:

— Զա՛նըմ,— կըսե գեղացին,— մըջ ժամուն իմ գլխուն խաշ իս բռնի, իմ ճեփու կնքու քավորն իս էղի, քու սանամոր հմա՛լ կըսեր՝ «իմ քո՛ւր, իմ բերնի սրբութե՛ն», օր ջրեր կը կանեն, աստը՝ ծուց չըս վա՛խենա:

Կնիկն դձեն կը քցե գլուխ, դիլա ու քերես կը ճանկուտե.

— Խուրբա՛ն էղնիս դու քավորոջ, գիշերս էկավ տուն, ըսի՛՜ «Քա՛վոր աղա, մանցի իմ մոտ, մինակ իմ, կը վախենամ»: Մարդն իմ խոսք չը կոտրեց, մնաց. մկա դու պտի ըդոր ձեռք պագիս, քոտնեք լվաս, ջուր խմիս, օր ընձի մինակ չը թողեր է:

Կըսին՝ էդ ախմախ ավտըցեր է կնկա խոսքին, ու չուրի յըսօր եր խոսք կը բացվի քավորոջ վրեն, կըսե.

— Քավոր հմալ բան չէ՛նե՛: